ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«30» 03 2017թ.
ՊՄԿ/852

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ
պարոն Հ. ԱՅՈՒՆՑԻՆ

Հարգելի պարոն Այունց

Ի պատասխան Ձեր առ 16.03.2017թ. N 02104.1/1005-17 գրության՝ հայտնում եմ, որ, հիմք ընդունելով www.gnumner.am կայքում հրապարակված ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 09.03.2017թ. թիվ 22/17 որոշումը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/3-ՀՀՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-8/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 15.03.2017թ. կայացած նիստում որոշել է ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով «Անտարես» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-8/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերի պահանջներին և տվյալ չափաբաժնում վերջինիս հայտարարել ընտրված (հաղթող) մասնակից: «Անտարես» ՍՊԸ-ի հետ ընթացակարգի 2-րդ չափաբաժնով նախատեսված «Դեկորատիվ ստվարաթուղթ» ապրանքատեսակի մասով պայմանագիրը կնքված է:

Ինչ վերաբերվում է «Անտարես» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից անհրաժեշտ փաստաթղթեր և կարծիք չտրամադրելուն, ապա հայտնեմ, որ դրանք դեռևս 20.02.2017թ. թիվ ԴՎԱ/397 գրությամբ ուղարկվել էին լիազորված մարմին: Կենտրոնի 20.02.2017թ. թիվ 01/04-1/563-17 գրությունը մուտք է եղել միայն 27.02.2017թ., որին ի պատասխան, հաշվի առնելով անհրաժեշտ տեղեկությունները արդեն իսկ ուղարկված լինելու հանգամանքը, ինչպես նաև բանավոր հավաստում ստանալով տվյալ բողոքը համակարգող Կենտրոնի

ք.Երևան, 0044, Բագրևանդի 5, Հեռ.(+37410) 29-44-01, Ֆաքս (+37410) 29-43-12

աշխատակցից, ՀՀ պաշտպանության նախարարությունը 06.03.2017թ. թիվ ԴՎԱ/559 գրությամբ տեղեկացրել է անհրաժեշտ փաստաթղթերը և կարծիքը ուղարկված լինելու փաստի մասին, իսկ պատվիրատուի ներկայացուցչի՝ նիստին ներկա չգտնվելը պայմանավորված է այն հանգամանքով, որ բողոքի վերաբերյալ բոլոր փաստաթղթերն ու հայտնված կարծիքը արդեն իսկ ուղարկված էին, և ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչը տվյալ հարցի վերաբերյալ այլ դիրքորոշում չէր կարող ունենալ:

Հարգանքով՝

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ